Եւ առաւօտուս մուտ Մայիսի, որ օր Ուրբաթ։ Օրս կրկին փոխեց վէզիրն զպատրիգն Հոռոմոց և առեալ այլ ևս բազում փող և զմիւսն ևս արար պատրիգ։

Շաբաթի օրս (2 Մայիս) և ոչ տիւան եղև, զի հիւանդ է։ Երեկոյիս փռան տղաքն եկին ի տեսանել զՄղտեսին։

Կիրակի Դ-իս։ Օրս լուսինն նոր էր և ըստ բառի Տաճկաց Շապան ասի։ Օրս էֆէնտին մեծ զպազարպաշին մեծաւ բարկութեամբ ի վար առեալ գանէ աբամբք իւրով, և նա քանզի եէնկիչէրի էր՝ գնացեալ առ տեարս իւր և ընկերակիցքն հանդերձ գնդին իւրեանց և ի ծածուկս բազում աղմուկս հանեալ ի մէջ իւրեանց և ի մէջ կողմի վէզիրին ընդ միմեանս հակառութեամբ եթէ ոչ փոխեսցես զդա չես բարեկամ կայսեր, այլ մեք ամենայն գնդիս ելանեմք յոտին և զնա մասն մասն առնելոց եմք և վերջն այլ ի չարիսն երթալոց է։ Ապա և վէզիրն զնա մանզուլ արար և եդ զատի զոմն էմիր, որ երբեմն արաբեալ էր սակաւ օր։

Դշի (6 Մայիս). Մարտիրոս վարդապետն ի մեր տունն եկ տեսանել զՄղտեսին վասն հիւանդութեան, ընդ նմա և այլ իրիցունք[1]) ի մերայնոցս և անտի ի յԱստուածածնայ, և կէս աւուրն ել և գնաց ի Սուրբ Գէորգ։

Եւ այդուցս Համբարձում Տեառն մերոյ որ օր ամսոյ Է-ն էր Մայիսի, ել գնաց ի գերեզման Հոգեւորտիրին։

Եւ օրս Ուրբաթ (8 Մայիս). ել և գնաց Մարտիրոս վարդապետն ի Պրուսա։ Եւ օրս զազիէսքէրքն փոխեցին եւ եդին Ուռումէլի զՍուննիզատէն եւ Ա-

1) իրիցուք։